ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 35-20

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «11» «02» 2020թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Արմինե Խառատյանի (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ը դեմս տնօրենի պաշտոնակատար Դավիթ Բաբայանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1919-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), «Սերմերի որակի ստուգման և պետական սորտափորձարկման միջոցառումներ» 2020 թվականի ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է Ծրագրի (ծրագիր 1059, միջոցառում 11003, 04.02.01.01) իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված մինչև 48065700 (քառասունութ միլիոն վաթսունհինգ հազար յոթ հարյուր) դրամ գումար, 2.1.2 կետով սահմանված հաշվետվության և ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների ընդունման արձանագրության հիման վրա, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Կազմակերպության կողմից իրականացվելիք Ծրագրի միջոցառումները, Ծրագրի ոչ ֆինանսական (արդյունքային) ցուցանիշների կատարման ժամանակացույցը և վճարման ժամանակացույցը ներկայացված են սույն պայմանագրի համապատասխանաբար NN 1, 2 և 3 հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1 կազմակերպությունից պահանջել Ծրագիրը կատարել պայմանագրով սահմանված ժամկետներում.

2.1.2 կազմակերպությունից պահանջել Ծրագրի կատարման համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանով հաստատված ձևով (ձև Հ-2, Հ-4 Հ-8 և տեքստային) եռամսյակային և տարեկան աճողական հաշվետվություններ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 10-ը.

2.1.3 ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող Ծրագրի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.4 պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված Ծրագիրը՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված տուգանքը.

2.1.5 առանց իրականացված Ծրագրի միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրի իրականացման ժամկետները (Ծրագրի իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված Ծրագրային միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.6 սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 իրականացված Ծրագրային միջոցառումների արդյունքը պետական մարմնի կողմից ընդունելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2 պետական մարմնի կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառած վնասները:

2.3 Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1 կատարել պայմանագրով նախատեսված Ծրագրային միջոցառումների իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.2 իրականացնել պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.3 իրականացված Ծրագրի մասին ներկայացված հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված Ծրագրային միջոցառումները համապատասխանում են Ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են Պայմանագրին կից Ձև 1-ի ձևաչափով կազմված ընդունման- հանձնման արձանագրությամբ:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 իրականացնել Ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2 պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակով.

2.4.3 կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4 սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմնին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ,

2.4.5 սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6 պետական մարմնի կողմից առանձին Ծրագրային միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան.

2.4.8 Ծրագրի իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2020 թվականի դեկտեմբերի 25-ը,

3. Մոնիթորինգը

3.1 Պետական մարմինը Ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2 Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4 Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5 Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1 Կազմակերպությանը վճարումներն իրականացվում է պետական բյուջեով նախատեսված գումարների սահմաններում կազմակերպության կողմից ներկայացվող Պայմանագրին կից Ձև 2-ի ձևաչափի եռամսյակային կամ ամսեկան հայտերի հիման վրա, ներկայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, նախորդ հաշվետու ժամանակաշրջանի հաշվետվությունները պետական մարմնի կողմից ընդունման արդյունքներով: Ընդ որում եռամսյակային հաշվետվությունների չընդունման դեպքում ֆինանսավորումը դադարեցվում է մինչև կատարված աշխատանքների ընդունումը:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, և գործում է մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1 Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1 Պայմանգիրը կազմված է սույն հիմնական տեքստից և հետևյալ Հավելվածներից, որոնք կազմում են պայմանագրի անբաժանելի մասը.

Հավելված N 1 -Ծրագրի միջոցառումներ,

Հավելված N 2-Ծրագրի միջոցառումների և ոչ ֆինանսական (արդյունքային) ցուցանիշների կատարման ժամանակացույց,

Հավելված N 3 - վճարման ժամանակացույց:

8.2 Պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքները ընդունվում են Պայմանագրին կից Ձև 1-ի հանձնման-ընդունման արձանագրությամբ, որը Պայմանագրի 2.1.2 կետում նշված ժամկետներում, Հաշվետվության հետ միասին, երկու օրինակից լրացված, ստորագրված և կնքված ներկայացվում է Կազմակերպության կողմից:

8.3 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.4 Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8.5 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պետական մարմին	**Կազմակերպություն**
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	«Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ
Հասցե՝	Հասցե՝
0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5	ք. Երևան, Մամիկոնյանց 39 ա
Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011032183	Հ/Հ 900018003849
ՀՎՀՀ 02698604	ՀՎՀՀ 0009169
Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝	տնօրենի պաշտոնակատար՝
ԱՐՄԻՆԵ ԽԱՉԱՏՅԱՆ	ԴԱՎԻԹ ԲԱԲԱՅԱՆ
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
2020թ. 02 11 -ին
կնքված N35-20 պայմանագրի

ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

հ/հ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	վերջնա-ժամկետը	պահանջվող գումարը (հազ. դրամ)
1.	**Սերմերի որակի ստուգման և պետա-կան սորտափորձարկ-ման միջոցառումներ**	Ծրագրի նպատակը գյուղատնտեսության բնագավառում տեխնոլոգիական առաջընթացի և Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության միջոցառումների ապահովումն է: ՀՀ 2020թ. պետական բյուջեից հատկացվող դրամաշնորհի տրամադրումը պայմանավորված է բույսերի նոր սորտերի արտոնագրման և օգտագործման գործընթացի կանոնակարգման, սելեկցիոն նվաճումների իրավական պաշտպանության ապահովման, հանրապետության բնակլիմայական տարբեր գոտիներում մշակության երաշխավորվող բույսերի սորտային կազմի ընդլայնման և ցանքատարածությունների ֆիտոսանիտարական վիճակի վատթարացման կանխարգելման նպատակով պետության կողմից «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ին իր կանոնադրական խնդիրների իրականացման համար ֆինանսական աջակցություն ցուցաբերելու անհրաժեշտությամբ	Ծրագրավորվում է իրականացնել սելեկցիոն նվաճումների հայտերի փորձաքննություններ, սերմերի որակի լաբորատոր հետազոտություններ և փաստաթղթավորում, բույսերի նոր սորտերի տեղեկագրերի հրապարակումներ, ինչպես նաև բույսերի նոր սորտերի դաշտային փորձարկումներ:	Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա ունենալ սելեկցիոն նվաճման հայտերի փորձաքննության արդյունքում մշակաբույսերի արտոնագրված և երաշխավորված նոր սորտեր /հիբրիդներ/, բույսերի նոր սորտերի վերաբերյալ հրապարակված պաշտոնական տեղեկատվություն:	31.12.2020թ.	48065.7
	Ընդամենը					**48065.7**

Պետական մարմին

Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝
ԱՐՄԻՆԵ ԽԱՌԱՏՅԱՆ

Կ.Տ.

Կազմակերպություն

տնօրենի պաշտոնակատար՝
ԳԱՎԻԹ ԲԱԲԱՅԱՆ

Կ.Տ.

Հավելված N 2
2020թ 02 17 -ին
կնքված N35-20 պայմանագրի

ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ (ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Նկարագրությունը	Միջոցառման անվանումը	Նախատեսվում է իրականացնել 2020 թվականի ընթացքում ընդ որում աճողական				Միավորի գին (հազ.դրամ)	Միջոցառման արժեքը (հազ.դրամ)
		I եռամսյակ	I կիսամյակ	ինն ամիս	տարի		
		քանակը	քանակը	քանակը	քանակը		
1	2	3	4	5	6	7	8
Գյուղատնտեսության մեջ օգտագործվող սերմերի որակի լաբորատոր հետազոտությունների ծառայություններ, սելեկցիոն նվաճումների հայտերի փորձաքննություններ, բույսերի նոր սորտերի փորձարկումներ	Սելեկցիոն նվաճումների հայտերի փորձաքննություններ, գրանցամատյանների վարում, օրիգինատորների հաշվառում, բույսերի սորտերի նկարագրությունների և բնութագրերի կազմում (հատ)	2	6	10	15	160.286	2404.3
	Բույսերի սերմերի որակի լաբորատոր հետազոտություններ և փաստաթղթավորում (հազ.տոննա)	1.8	4.9	9.4	12.23	2337.6	28588.8
	Բույսերի նոր սորտերի տեղեկագրի և գրանցամատյանի հրապարակում (էջ)				4800	0.052	249.6
	Բույսերի նոր սորտերի ստուգիչ ցանքերի իրականացում և դաշտային փորձարկումներ (հատ)	20	65	90	115	146.287	16823.0
	Մշակաբույսերի բերքատվության բարձրացում 2019թ. համեմատ (%)				5-10		
	Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների ֆիտոսանիտարական վիճակի բարելավում 2019թ. համեմատ (%)				5-10		
	Լավագույն սորտերի արտոնագրման, շրջանացման և օգտագործման թույլտվության հատկացումների արդյունքում նախկին սորտերի համեմատած բերքի քանակի որակի ավելացում (%)				5-10		
	Սերմերի որակի լաբորատոր հետազոտությունների, սելեկցիոն նվաճումների հայտերի փորձաքննությունների, բույսերի նոր սորտերի փորձարկումների իրականացում (ամիս)				12		
Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազ.դրամ)		8652	20668.2	28358.7	48065.7		48065.7

Պետական մարմին

Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝
ԱՐՄԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Կ.Տ.

Կազմակերպություն

տնօրենի պաշտոնակատար՝
ԴԱՎԻԹ ԲԱԲԱՅԱՆ

Կ.Տ.

Հավելված N 3
2020 թվականի 02 11 -ին
կնքված N 35-20 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հազ. դրամ

Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին՝												Ընդամենը
		I եռամսյակ			I կիսամյակ			ինն ամիս			տարի			
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Սերմերի որակի ստուգում և պետական սորտափորձարկում		0.0	4707.6	8651.8	12657.3	16662.8	20668.2	23231.7	25795.2	28358.7	34928.7	41498.7	48065.7	48065.7
Ընդամենը														

Պետական մարմին

Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝
ԱՐՄԻՆԷ ԽԱՉԱՏՅԱՆ

Կ.Տ.

Կազմակերպություն

տնօրենի պաշտոնակատար՝
ԴԱՎԻԹ ԲԱԲԱՅԱՆ

Կ.Տ.

Ձև 2

ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՀԱՅՏ N
ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

_____ _____

Կազմակերպության անվանումը ՀԱՇՎԻ ՀԱՄԱՐԸ

Ընտրին Խումբ Դաս Ծրագիր _____ _____2020 թ.

ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ ԱՄՍԱԹՎ

_____

_____ (ծրագրի անվանումը)

Հ/Հ	ԾԱԽՍԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀՈԴՎԱԾ	ԳՈՒՄԱՐ
ԸՆԴԱՄԵՆԸ			

Առաջին կարգի ստորագրություն՝

Կ. Տ

Երկրորդ կարգի ստորագրություն՝

Ձև-1

Հաստատում եմ

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N___
Պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

ՀՀ էկոնոմիկայի նախարարության և _____ միջև «_____» «_____» 2020 թվականի կնքված N _____ պայմանագրի շրջանակներում 2020 թվականի «_____» դրությամբ կազմակերպության կողմից կատարվել է պայմանագրով նախատեսված ստորև նշված աշխատանքները.

Կատարված աշխատանքների						
Հ/Հ	Անվանումը	Չափի միավորը	Քանակական ցուցանիշներ		Արժեքը(հազ.դրամ)	
			Նախատեսված	Փաստացի	Նախատեսված	Փաստացի

Կատարված աշխատանքները համապատասխանում են կնքված պայմանագրին ու ծրագրին և ընդունվում են:

Աշխատանքը հանձնեց՝

_____
(ստորագրություն ազգանուն, անուն)

Աշխատանքը ընդունեց՝

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար

_____
(ստորագրություն ազգանուն, անուն)

Ֆինանսական ստորաբաժանման ղեկավար

_____
(ստորագրություն ազգանուն, անուն)